

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ ԺԱՌԱՆԳԱԿՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

16 Յունիս, Շաբաթ երեկոյեան ժամը 7.30-ին, Ալէքս և Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի ընդարձակ սրահին մէջ կատարուեցաւ Վարժարանի Ամավերջի Հանդէսը, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Զօր և ի ներկայութեան Միաբան Հայրերու և գաղութիս ընտրանիին:

Հանդէսը սկսաւ ժառանգաւոր սաներու կողմէ երգուած «Սիրտ ի Սիրտ»՝ Վարժարանի քայլերգով, որմէ ետք Վերադասուէ Գերշ. Տ. Շահէ Արքեպս. ըրաւ բացման խօսքը: Անկէ ետք, մօտ մէկ ժամ, ժառ. սաներ գործադրեցին կոկիկ յայտագիր մը: Նախ, Վարժարանի եկեղեցական երաժշտութեան ուսուցիչ և Ս. Աթոռոյոյ Դպրապետ Տիար Սահակ Գալաթեանի ղեկավարութեամբ երգեցին Կարօ Ջաւրեանի «Ուսանողական Երգը», որմէ ետք յստակ առաջաւորութեամբ Սիամանթոյի «Ս. Մեսարոպէն հաստուածներ արտասանեց Սարգիս Էօզեան: Անկէ ետք ժառանգաւորներ երգեցին անմահ կամօտանէ եղանակաւորուած «Մայրիկ» երգը, և ապա Եղիա Չալըշըրեան ապրումով արտասանեց Պատրիարք Ս. Զօր «Սեան» քերթուածը: Անոր յաջորդեց Տիար. Խաչիկ Գարայեանէ երգուած կամօտանի «Միքանի Մառ»ը, որուն դաշնակի վրայ կ'ընկերանար Վարժարանի Եւրոպական երաժշտութեան ուսուցիչ Տիար Վահէ Գալաթեան: Մուրաթ Տէմիրճեան հասկացողութեամբ արտասանեց մեծատաղանդ բանաստեղծ Պարոյր Սեակի «Քիչ ենք, բայց Հայ ենք» քերթուածը, ապա ժառ. սաներ խմբերգեցին է. Բաղդասարեանէ դաշնաւորուած «Արփա-Սեան»ը: Անկէ ետք Տիար. Հրաչ Զիլինկիրեան իր և իր դասընկերներուն զգացումներուն թարգմանը հանդիսացաւ գողտրիկ ուղերձով մը, ուր շնորհակալութեան խօսք կ'ըլլար Ամեն. Ս. Պատրիարք Զօր, Վերադասուէ Սրբապանին, ուսուցիչներուն և բոլոր անոնց՝ ուրոնք դեր մը ունեցան զիրենք այս նշանակալից հանգրուանին հասցնելուն մէջ: Տ. Շահէ Արքեպս. ամփոփ քերթեալ մէջ ներկայացուց ավտեկերը Վարժարանի իննամսեայ կեանքին ու գործունէութեան, և հրաւիրեց Նօրին Ամենապատուութիւնը որ կատարէ վկայականներու բաշխումը 4 Ուրարակիրներուն և մրցանակներ՝ յաջող ուսանողներուն: Իր փակման խօսքին մէջ Ս. Պատրիարք Հայրը շնորհ զրաւ մեր ժմծնաքաննչին տիբապետիւս կարեւորութեան վրայ, մանաւանդ մեր ժողովուրդի հոգեւոր թէ կրթական ծառայութեան նուիրուելու պատրաստակամ թարմատի ուժերուն: Հանդէսը փակուեցաւ «Տէր, կեցո դու գէշայ» մաղթերգով:

ՏԱՐԵԿԱՆ, ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՔ

Ս. ԹԱՐԿԱՐԱՆԶԱՅ ԵՐԿՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ուրիշ տարիներու նման, այս տարի ևս Մայիս և Յունիս ամիսներու ընթացքին կատարուեցան Ս. Թարգմանչաց Երկր. Վարժարանի տարեկան Դաշնահանդէսը, Պաշարը և Մանկապարտէզի աւ Երկրորդական բաժնի Ամավերջի Հանդէսները:

Ա. — ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

Կիրակի, 13 Մայիս, կէսօրէ ետք ժամը 4ին, նախկին ժառնգ. Վարժարանի մարդադաշտին վրայ կատարուեցաւ Վարժարանի տարեկան Դաշնահանդէսը, ի ներկայութեան Միաբան Հայրերու և հետաքրքիր ներկաներու ստուար բազմութեան: Երկսեռ աշակերտութիւնը, բաժնուած երկուական մրցողք խումբերու, երկու ժամեր շարունակ ցուցաբերեց տարուան մը ընթացքին դպրոցէն ներս ջամբուած

Ֆիզիքական դաստիարակության արդիւնքը, որ արժանապատիւ հանդիսատեսներու շերտ գնահատանքին: Յայտարարել կը թաղկանար երկար և բարձր ուսումնական, վաղ-քերէ, զուարճախազութ, ժողովրդականութեամբ, դրօշաւաւ և պարտաւարճութենէ: Նախորդ տարիներու նման, այս տարի ևս կ'արժի (կարարտ) խումբը ազանովեց իր յաղթա-նակը կանաչ (Մասիս) խումբին դէմ: Օրը արդէն ճշգրիտ կ'իրակի՝ էր:

Աւարտին, Հանդէսի Նախագահ և Վարժարանի Տեսուչ Գրքը, Տ. Կիւրեղ Ե-պիսկ. Գարեկեան պարգևատրեց յաջող մարզիկները բաժաններով ու մեդալներով:

Բ. — ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋԻ ԲԱԺՆԻՆ

3 Յունիս, Կիրակի կէսօրէ ետք ժամը 3-45ին, Հայ Երիտասարդաց Միութեան Ակումբին մէջ կայացաւ վարժարանի Մանկապարտէզի բաժնին Ամովերջի Հանդէսը, ի ներկայութեան ծնողներու և ազգայիններու խումբի բազմութեան:

Ետքը երկու ժամեր Մանկապարտէզի զոյգ դաստարաններու, ինչպէս նաև Նախակրթարանի Ա. Կարգի փոքրիկները հանդէս եկան ուսումնականներով, տրամադ-ցութիւններով և հայկական պարերով:

Մարիկ դասարանէն շրջանաւարտ 14 երկսեռ փոքրիկներ հրաժեշտ տուին Ման-կապարտէզին և հանդէսի աւարտին Տեսուչ Սրբազանէն (որ նոյն ատեն կը նախա-գահէր հանդիսութեան) ստացան իրենց վկայականները, ժողովուրդի խանդավառ ծափահարութիւններուն ընդմէջէն:

Գ. — ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱԺՆԻՆ

Կիրակի, 10 Յունիս, երկուշաբթի ժամը 6-30ին, Ս. Թարգմանչաց Վարժարանի զարգարուած սրահը լեցուն էր արդէն ծնողներու և հրաւիրակներու կողմի բազ-մութեամբ: Բոլորն ալ հկած էին հանդիսատես ըլլալու մեր գաղութի զաւակներուն ձեռք ձգած յաջողութիւններուն և հպարտանալու կրթական մարզին մէջ անոնց ցուցարարած արդիւնքներով: Հանդէսին կը նախագահէր վարժարանի բարեջան և թաղամասայ Տեսուչը՝ Գրքը, Տ. Կիւրեղ Եպս.։ Ներկայ էին նաև Միաբան Հայերը:

Այս տարի հանդէսը նուիրուած էր վարժարանի կառուցման 50ամեակին: 1929ի Հոկտեմբերին էր որ վարժարանի նոր շէնքը կը բացուէր, իր մէջ ընդունելու և հայեցի առողջ դաստիարակութիւն ջանքերու գաղութի մեր երկսեռ փոքրիկներուն:

Զոյգ բանախօսութիւններով, ընթացաւարտ դասարանէն աւանդոտ-ուսանողու-հինք հանգամանօրէն ներկայացուցին կէս դարու ընթացքին վարժարանին կարած ուղին և անոր կատարած նախախնամական զբեր Սաղիմաճյոյ գաղութին մէջ: Մէջ ընդ մէջ եղան խմբերգներ՝ զեկամպարտութեամբ երաժշտութեան ուսուցիչ Պր. Սահակ Գալստեանի, ինչպէս նաև խմբական արտասանութիւններ՝ Սիւրբանթոյէն (Ս. Մհա-րայ) և Վահէ-Վահեանէն (Երկրի Կարօտ):

Հանդէսի երկրորդ մասին, Տեսուչ Սրբազանը հրաւիրեց թաղամասապետ ու-սուցիչ Պր. Պետրոս Լէփեճեանը, որ իր ուսուցչութեան 50ամեայ Յոբելեանին ա-ռիթով (որ նշուեցաւ 24 Յունիսին, Հ. Ե. Մ. ի Ակումբին մէջ) կատարէ վկայական-ներու բաշխումը ընթացաւարտ դասարանի 11 սան-սանուհիներուն և մրցանակնե-րու բաշխումը ուսման, վարժի և ձեռագործի մէջ յաջողակ աշակերտներուն: Օրը Մարալ Գահուէճեան, ի դիմաց իր ընկեր-ընկերներուն, շնորհալի ուղերձով մը արտայայտեց զգացումները վարժարանէն բաժնուող շրջանաւարտներուն: Հրամեցաւ Երգէն ետք, Տեսուչ Սրբազանը ըրաւ փակման խօսքը, յորդորելով ընթացաւարտ-ները որ հաղորդակից մնան միշտ Թարգմանչացի մէջ իրենց ջանքերով հայեցի ազե-կանութեան և ծնողները՝ որ առհմիկ դաստիարակութեան ճշմարիտ գնահատանքին զուգած՝ իրենց փոքրիկները առաջնորդին միայն ու միայն հայկական վարժարան, Ե-րուն բարիքը տրուած ի՛նչ ունենալ մեր շատ մը գաղութներու զաւակներուն: Սուրբ Աթոռոյ Մաղթերգը փակեց մօտ երկու ժամեր տևող տպաւորիչ այս Հանդէսը: